Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն 1.

Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստի

2024 թ. Մայիսի 2

Նախագահում էր ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ, Հանձնաժողովի անդամ Տաթևիկ Ստեփանյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի անդամներ

Արաքսիա Սվաջյան	ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ
Արմեն Գասպարյան	ՀՀ առողջապահության նախարարի տեղակալ
Կամո Բաբայան	ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների հանցավորության և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության անչափահասների հանցավորության կանխարգելման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ
Ժաննա Հակոբյան	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության պետ
Արթուր Կեսոյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հավասար հնարավորությունների ապահովման վարչության պետի տեղակալ

Անահիտ Հովհաննիսյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հավասար հնարավորությունների ապահովման վարչության Երեխաների իմնահարցերի բաժնի պետ (Հանձնաժողովի քարտուղար)
Նախշուն Աֆանասյան	«Հայաստանի Մանուկներ» բարեգործական հիմնադրամի սոցիալական աշխատանքի ղեկավար
Սպարտակ Սարգսյան	«ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն
Գայանե Հովակիմյան	Մանկական զարգացման հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Հասմիկ Սարգսյան	«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ծրագրի ղեկավար
Միրա Անտոնյան	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի տնօրեն

Նիստին մասնակցում էին հրավիրյալներ՝

Հերիքնազ Տիգրանյան	ՀՀ ԱԺ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ
Լիլիթ Ավետիսյան	ՀՀ առողջապահության նախարարության երեխաների առողջության պահպանման բաժնի պետ
Շավարշ Արտաշյան	ՀՀ Կուսայի մարզպետի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ոլորտի հարցերի վարչության ավագ մասնագետ

Վանիկ Բաբաջանյան	Աբովյանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար
Ստեփան Հակոբյան	Աբովյան համայնքի Արամուս բնակավայրի վարչական ղեկավար
Կարինե Մուրադյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության վարչության երեխաների պաշտպանության բաժնի պետ
Անուշ Սարգսյան	Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմի երեխաների և սոցիալական պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ-սոցիալական աշխատող, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի քարտուղար
Զարուհի Հովհաննիսյան	«Կանանց աջակցման կենտրոն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ
Սոֆի Բոստանջյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Հավատար հնարավորությունների վարչության Մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի բաժնի պետ

Հանձնաժողովի նիստը մեկնարկեց օրակարգի համաձայն: Պայմանավորված Հանձնաժողովի նախագահի բացակայությամբ, գործող օրենսդրության համաձայն վերջինիս համաձայնությամբ՝ նիստը վարում էր Հանձնաժողովի անդամ, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տաթևիկ Ստեփանյանը:

Հանձնաժողովի նիստին բացման խոսքով հանդես եկավ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը:

Նախարարի տեղակալը, ողջունելով նիստի մասնակիցներին և ներկաներին, ներկայացրեց Հանձնաժողովի օրակարգը:

Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև ՀՀ ԱԺ պատգամավոր, աշխատանքի և սոցիալական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյանը: Վերջինս կարևորեց Հանձնաժողովի դերը երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում:

1. Հանձնաժողովի քարտուղար Ա. Հովհաննիսյանը Հանձնաժողովի անդամներին և ներկաներին տեղեկացրեց օրակարգային առաջին հարցի՝ «Ս.թ. հունվարի 15-ից 19-ն ընկած ժամանակահատվածում Հանձնաժողովի անդամների կողմից երեխաների շուրջօրյա և ցերեկային խնամք իրականացնող հաստատություններ իրականացված այցելությունների արդյունքների ներկայացում» վերաբերյալ: Հանձնաժողովի նախագահի պարտականությունները կատարող Տ. Ստեփանյանը ներկաներին տեղեկացրեց, որ սույն այցելությունները բխում են ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների կոմիտեում երկրի զեկույցի ներկայացման և Երեխաների իրավունքների պաշտպանության համալիր ծրագրի մշակման ուղղությամբ նախանշված աշխատանքներից:

Հանձնաժողովի անդամները ներկայացրեցին տեղեկատվություն իրականացված այցելությունների մասին:

- «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ իրականացված այցի արդյունքների մասին ներկայացրեց ՀՀ ՆԳՆ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության անչափահասների հանցավորության և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության անչափահասների հանցավորության կանխարգելման բաժնի պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Կ. Բաբայանը: Վերջինս ներկայացրեց, որ ս. թ. հունվարի 17-ին «Գավառի մանկատուն» ՊՈԱԿ է այցելել անչափահասների հանցավորության և ընտանիքում բռնության կանխարգելման վարչության պետ, ոստիկանության գնդապետ Էդգար Պետրոսյանը: Կ. Բաբայանը Հանձնաժողովի անդամներին հայտնեց, որ երեխաների կողմից բարձրացված խնդիրներ առկա չեն:
- Հանձնաժողովի անդամ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կոնվենցիոն մանդատների ապահովման վարչության պետ Ժ. Հակոբյանը հայտնեց, որ ՀՀ

մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը պարբերաբար այցելություններ է իրականացնում «Երևանի «Հատիկ» երեխաների աջակցության կենտրոն» ՊՈԱԿ:

- Հանձնաժողովի անդամ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Սվաջյանը նշեց, որ թեև այցելություն չի եղել «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ, սակայն կարևորեց պարբերաբար երեխաների կրթության գործընթացում առկա խնդիրների մասին տեղեկատվության ստացումը: Հանձնաժողովի քարտուղար Ա. Հովհաննիսյանը նշեց, որ սույն Հանձնաժողովին կից ստեղծված «Շուրջտրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող երեխաների կրթական իրավունքի իրացում» աշխատանքային խմբի շրջանակներում բարձրացված խնդիրները արդեն իսկ ներկայացվել են: Ա. Հովհաննիսյանը հավելեց, որ նշյալ տեղեկատվությունը կրկին կներկայացվի ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:

- Հանձնաժողովի անդամ. «ՍՕՍ-Մանկական Գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի ազգային տնօրեն Սպարտակ Սարգսյանը ներկայացրեց, որ ս. թ. հունվարի 18-ին այցելություն է իրականացվել «Սյունիքի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ: Ս. Սարգսյանը բարձր գնահատեց մասնագետների կողից իրականացվող աշխատանքները, նրանց մասնագիտական պատրաստվածությունը, նշեց նաև, որ երեխաները հաճույքով հաճախում են կենտրոնի ցերեկային բաղադրիչ: Ս. Սարգսյանը ներկայացրեց նաև հաստատության շուրջտրյա բաղադրիչի շենքային անբավարար պայմանների մասին: Հավելեց նաև, որ այցի շրջանակներում ներկայացվել է, որ ներկայում առկա է հաստատության վերանորոգման, վերազինման նախագծանախահաշվարկային նախագիծը: Հանձնաժողովի անդամ Ս. Սարգսյանը առաջարկեց մարզում ներդնել ընդանիքների ամրապնդմանն ուղղված միջոցառումներ: ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը վերահաստատեց, որ հաստատության նախագծանախահաշվարկային աշխատանքները մեկնարկել են և Ս. Սարգսյանի առաջարկի վերաբերյալ տեղեկացրեց նաև այն մասին, որ առաջիկայում Մարդը կարիքի մեջ (PIN) միջազգային հասարակական կազմակերպությունը դրամաշնորհային մրցույթ է հայտարարելու տեղական հասարակական կազմակերպություններին աջակցելու նպատակով, որի շրջանակներում առաջարկեց դիտարկել ընտանիքների ամրապնդումը՝ որպես նշյալ ծրագրի մաս: Հանձնաժողովի նախագահ Տ. Ստեփանյանը առաջարկեց այս մասին տեղեկացնել նշյալ կազմակերպությանը:

- «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի տնօրենի Մ. Անտոնյանը «Երևանի «Մանկան տուն» ՊՈԱԿ իրականացված այցի շրջանակներում բարձր գնահատեց հաստատության աշխատակազմի աշխատանքը, կարևորեց անհրաժեշտ մասնագետներով համալրելու, երեխաների կենսաբանական ընտանիքների հետ տարվող սոցիալական աշխատանքի խորացման անհրաժեշտությունը: Մ. Անտոնյանը բարձր գնահատելով կազմակերպության տնօրենի ղեկավարման կոմպետենտությունը՝ կարևորեց նաև մասնագիտական անձնակազմի պատրաստվածությունը:
- Գ. Հովակիմյանը ներկայացրեց, որ ս.թ. հունվարի 22-ին այցելություն է իրականացվել «Լոռու մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ՝ բարձր գնահատելով կառույցի կողմից իրականացվող աշխատանքները: Գ. Հովակիմյանը նշեց, որ ինչպես կենտրոնում, այնպես էլ մարզում առկա է մասնագիտական ներուժի պակաս:

Հանձնաժողովի անդամ, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ Ա. Սվաջյանը հավելեց, որ մասնագիտական անհրաժեշտ աշխատուժի պակաս առկա է ողջ հանրապետությունում և ընդգծեց այս ուղղությամբ աշխատանքների իրականացման անհրաժեշտությունը, կարևորեց ծառայությունների բարեփոխումը:

- Հանձնաժողովի անդամ, «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության ծրագրի ղեկավար Հասմիկ Սարգսյանը ներկայացրեց, որ ս.թ. հունվարի 16-ին և 17-ին այցելություններ են իրականացվել «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ և «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ: «Գյումրու երեխաների տուն» ՊՈԱԿ այցելության շրջանակներում Հ. Սարգսյանը բաձր գնահատեց երեխաների նկատմամբ իրականացվող խնամքը: Հ. Սարգսյանը իր մտահոգությունը հայտնեց՝ նշելով այն մասին, որ հաստատությունում խնամվող երեխաներն իրենց հետագա կյանքն հաստատությունից դուրս չեն պատկերացնում, կարևորեց անկախ կյանքին միտված միջոցառումների իրականացումը: «Շիրակի մարզի երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» ՊՈԱԿ այցելության շրջանակներում Հ. Սարգսյանը ներկայացրեց՝ հաստատության ճգնաժամային բաղադրիչում խնամվող շատ երեխաների խնամքն ու դաստիարակությունը հնարավոր կլիներ կազմակերպել այլընտրանքային խնամքի՝ խնամակալ նշանակելու միջոցով, սակայն գործնականում վերջիններիս որևէ աջակցության տրամադրման բացակայությունը այս ուղղությամբ առաջացնում է մի շարք խոչընդոտներ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը ընդգծեց, որ ներկայում վերանայվում է ընտանիքների անապահովության գնահատման համակարգը և ըստ այդմ էլ կնախանշվեն աջակցության թիրախ խմբերը, ուղղությունները:

Հանձնաժողովի անդամներն ի գիտություն ընդունեցին այցելությունների արդյունքները և հարցապատասխանի միջոցով վերահաստատեցին երեխաների հետ անմիջական շփում ունենալով կարևորությունը՝ դրանով իսկ նպաստելով վերջիններիս լսված լինելու իրավունքի իրացմանը:

Հանձնաժողովի քարտուղար Ա. Հովհաննիսյանը, Հանձնաժողովի անդամներին տեղեկացրեց, որ ներկայում Հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկված «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության տնօրեն Վ. Սեդրակյանը փաստացի 4 նիստի ներկա չի գտնվել, իսկ Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի գլխավոր հանձնակատար Ա. Մուրադյանը տեղափոխվել է այլ աշխատանքի, ուստի առաջարկեց քվեարկել նշյալ Հանձնաժողովի անհատական կազմում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ, որն ընդունվեց միաձայն:

Նիստի ավարտին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալը Տաթևիկ Ստեփանյանը ևս մեկ անգամ շնորհակալություն հայտնեց դիտարկումների, առաջարկների համար և կարևորեց համագործակցային աշխատանքը՝ հիմքում ունենալով երեխայի լավագույն շահը:

Օրակարգային հարցերի ներկայացումից հետո Հանձնաժողովի անդամները հարցապատասխանի միջոցով ամփոփեցին առաջիկա անելիքները և արդյունքում որոշվեց.

1. Հանձնաժողովին կից ստեղծված «Շուրջօրյա խնամքի հաստատություններում խնամք ստացող երեխաների կրթական իրավունքի իրացում» աշխատանքային խմբի շրջանակներում բարձրացված խնդիրները կրկին ներկայացնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն:
2. Մարդը կարիքի մեջ (PIN) միջազգային հասարակական կազմակերպությանը ներկայացնել առաջարկություն՝ տեղական հասարկական կազմակերպություններին աջակցելու նպատակով հայտարարվող դրամաշնորհային մրցույթի շրջանակներում դիտարկել նաև ընտանիքների ամրապնդմանն ուղղված ծրագրեր:

3. Վերանայել՝ Հանձնաժողովի անհատական կազմում ընդգրկված «Հայաստանի մանկական ասոցիացիա» բարեգործական հասարակական կազմակերպության տնօրեն Վ. Սեդրակյանի. «Հասանելի համայնքային սոցիալական ծառայություններ» ծրագրի գլխավոր հանձնակատար Ա. Մոտաղյանի մասնակցությունը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ՝ Տ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Հովհաննիսյան